

ԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱՄԱԿԸ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱՆԻՆ
Ծննդյան 70-ամյակի առթիվ

Աշխարհներից մոտ և հեռու, երկրի բոլոր ափերից
ժողովուրդներն աշխատավոր իրենց հայացքն ցնծալից
Այսօր սիրով Քեզ են ուղղում, Առաջնորդիդ մեծանուն,
Իրենց հորը, հարազատին և ուսուցչին իմաստուն:
Հայ ժողովուրդն երախտագետ զգացմունքներով այսօր
Իր սրտագին խոսքն է քերում բարեկամին իր հզոր:
Մեր ժողովուրդը հինավուրց ի՞նչ հայրերի հողն արդար
Պաշտպանել է իր արյունով և ներկել է դարեդար,
Երազել է ազատություն, լույս, գիտություն, խաղաղ կյանք,
Երազել է ըստեղծագործ և անկաշկանդ աշխատանք:
Սակայն դաժան ոսոխները աշխարհակալ ու վայրագ
Մրածել են ժողովրդին, կործանել շեն ու փառք:
Եվ կողոպուտեց, գերի վարվեց ժողովուրդն անպաշտպան,
Դառավ պանդուխտ, անհայրենիք աշխարհով մեկ ցիր ու ցան:
Խաչակիր Եվրոպայից, Արևմուտքից ֆրիստոնյա
Անկարելի ցավերի մեջ՝ լույս փրկություն հուսաց նա:
Բայց ոհրածին արհաճերը, հենգ, ընչափաղ Եվրոպան
Մեր արյունը սակարկեցին մեր ոսոխի հետ դաժան:
Եվ մարդկային պատմությունը եղավ սակայն անարդար,
Հանդեպ մի հին ժողովրդի, ստեղծագործ, շինարար:
Ուր որ սակայն դեգերեց նա օտար երկրում վշտանեծ
Թե՛ հայրենի չճանաչվեց ավերների. փոշու մեջ
Անհունորեն երազեց նա ազատ, անկախ հայրենիք,
Նոր հոյակապ վերածնունդ, կյանք բեղմնավոր, երջանիկ:
Սակայն նորից որդեկորույս դառն հեծում էր նա դարեր
Իր աստղամեծ լեռների տակ, ուստաններում իր ավեր,
Երբ վերստին հին մոլուցքով բշտամին մեր բարբարոս.
Ուրի՛ն այնքան նախանձում են բորենիները բոլոր,
Երբ վերստին զարհուրելի կատաղությամբ իր անեղ
Ավերում էր, կոտորում էր աշխարհն հայոց հնազեղ.
Աշխարհն հայոց՝ ոգիացած ժողովրդի հանճարով,
Արվեստի վեճ կոթողներով, դյուցազնական վեպերով:
Մրածում էր մարդագայլը, մանուկներին հոշոտում:
Սպառվում էր ժողովուրդը. արյան հունձն էր բորբոքվում.
Մահանում էր Հայաստանը. ոչ մի սրտից օգնություն:
Անհուսություն խավարի մեջ վսեմ ձայնը Քո լսվեց.
«Պետք է փրկել Հայաստանը»: Եվ փրկության ժամն հեշեց:
Հասավ բազուկը մեծագոր՝ հանճարաշատ Լենինի,
Մի փայլ դրոշմ բոլշևիկյան—կասեց հունցքը արյունի:

Հայ ժողովրդի գյուցագնական բարեկամը դարավոր—
 Ռուս եղբայրը հասավ բուժեց մեր վերքերը արհածոր:
 Հոկտեմբերի արևի տակ ծնվեց շֆել, լուսավառ,
 Ազատության, եղբայրության, մարդկայնության նոր աշխարհ:
 Եվ առավ նա Հայաստանը իր փրկարար լույսի մեջ.
 Որպես մանուկ արևածին հայ ժողովուրդը կանգնեց.
 Կանգնեց ազատ սովետական բնտանիքում մեծափառ
 Իր պետական գրոշակով, իրավունքով հավասար:
 Կանգնեց խոխտ՝ սոցիալիզմի դրոշի տակ փառապանծ,
 Որպես զինվոր ֆաշիստիկ, որպես զինվոր անձնուրաց:
 Փոշիացան ստրկության շղթաները շոկալից.
 Եվ մեզ համար բացվեց նոր էջ հրաշապատում, անբախիծ:
 Քն օգնությամբ, Քն հանճարով, ով մեծագոր բարեկամ,
 Մեր փառերը բոլորեցին, մեր դաշտերը շունչ տան:
 Քն օգնությամբ համատարած աշխատանքը բռնկվեց,
 Գոտեպեղված գործի էլան ժողովուրդը՝ փոքր ու մեծ:
 Խորտակեցին ժայռ ապառաժ—ջրերն էլան պաղպաջուն
 Երգով եկան, կենդանացրին դաշտ ու ապառ տոչորուն:
 Մեր լեռների գագաթներում՝ ջրհեղեղից մեացած՝
 Լեակները կրակ դառան, ուժ ու եռանդ, լույսի զանձ:
 Համայնական մեր արտերում, այգիներում ոսկեկառ
 Առատության ծովը փովեց, բերք ու բարիք անապատ:
 Կառուցողի մուրնն է զեզում, բարձրանում են ամենուր
 Կամարների պես հաղթական ապարանքներ նորանոր:
 Անտառներից բափուր եղած մեր լեռները հրակեզ,
 Մեր դաշտերը ամայացած դառան պուրակ ու պարտեզ:
 Եղնիկները, սոխակները փախած ոսոխի ձեռքից,
 Վերադարձան մեր լեռները, մեր դաշտերը ծաղկալից:
 Կոռնկները մեր աշխարհից ուրախ լուրեր են տանում
 Պանդուխտներին մեր հեռավոր՝ հայրենադարձ, տոչորուն.
 Պանդուխտները հին կարոտով հայրենական տան ծովսին
 Բռնել են արդ վերադարձի վաղուց երազած ուղին:
 Գործարանները հոյակապ, մեքենաներ շառաչում
 Ընձնեղում են երկրին կորով, հառաչընթաց հարանուն:
 Անա ուստանը մեր շֆել, վառ պուրակներ հոգեթով,
 Կուլտուրայի վեհ տանարներ գեղափանդակ սյուներով:
 Արվեստների ու գիտությանց պերն կանառներ ներշնչող,
 Թանգարաններ և քառուղիներ և ակումբներ լուսաշող:
 Դպրոցների ցանցը լուսն՝ գյուղ ու ֆաղափ տարածուն,
 Ու մանուկներն վազ են տալիս կենսաբերիչ ու ցնծուն,
 Ուսանողներն մափառում են զրֆին հակված՝ մշտաբուն,
 Թափանցելու արվեստների և գիտության մեջ անհուն:
 Մեր արվեստի վարպետները, գուսանները խանդավառ
 Պանծացնում են Քն Մեծ դարը իմաստնագույն ու պայծառ:
 Ամրացնելու, կռու կռելու հիմքերը մեր գործության
 Տիեզերքի խորքն են սուզվում գիտունները մեր հոգեաշան:
 Հավերժական անդունդներից ուժ և հանանչ են որսում
 Եվ անմատույց արևների, աստղերի ֆայլն են չափում:
 Կյանքն է դարձել գործի, փառքի բոհչների ասպարեզ,
 Ամենուրեք ուրախության, երջանկության հոխ պարտեզ:
 Մեր լուսազարդ հայրենիքի սահմաններին առնաբեր
 Ոստիները մեր չարամիս՝ դավ են նյութում օր-գիշեր,
 Բայց մենք հանգիստ, սրտանվեր կառուցում ենք անվեհեր
 Կոմունիզմը խոր հիմքերով, խառիսխներով աներեր:
 Մենք վախ չունենք, մենք կերտում ենք, բարձրանում ենք անխափան,
 Մեր քիկունքին, որպես ամրոց, ֆաշ պանապան ու պաշտպան,

Միութունն է կանգնած հզոր. Միութունն անպարտելի.
 Եղբայրական Սովետների հզորությամբ անընկճելի:
 Ով Ստալին, Քո փառապանծ յոթանասուն ամյակին
 Բերում ենք մեր հրեմանքը, մաղթանքները արագին:
 Ուր պայքար կա բռնության դեմ, հալածանքի, կեղծման
 Դու այնտեղ ես Քո անունով, որպես դուր հաղթության:
 Սովորեցրիր Դու շարժանք մարդկությանը պայքարի
 Հանուն ազատ, երջանկաբեր, իդեալական աշխարհի,
 Ուր ուր մարդն է մարդուն եղբայր, իրար նեցուկ և ընկեր,
 Աշխատանքն է ուրախություն, սխրանք, բռնի կենսաբեր:
 Փա՛նֆ Քեզ հավետ... Դու հանեցիր խոր դարերից մթամած
 Բազմություններ ոտնահարված դեպի լույսը երազած:
 Դու զինեցիր զեղջուկներին, սարուկներին դարավոր
 Իրավունքով, նոր գիտությամբ, տեխնիկայով մեծագոր:
 Եվ տեղ դարձան նրանք իրենց արդար ու սուր վաստակին,
 Հայրենիքին, իշխանության և բնության տարերքին:
 Նոր կուլտուրա ամենուրեք, բյուր բարիքներ շաղ տվեց,
 Գյուղ ու քաղաք անջրպետող պատենքը հին խորտակեց:
 Պատմության երբը փոխեցիր, և օրենքը անբերի
 Մրբագործեց նոր կարգերը հեղաշրջված աշխարհի:
 Աշխարհով մեկ մաղթում ենք Քեզ կյանք ու արև անհատնում:
 Քո գործերին անմահություն, Քո ըզնեքին կատարում:
 Երբ բշտամի ֆաշիստական արյունատենչ ու մոլի
 Խուժեց երկիրը մեր խաղաղ, ով զորավար պանծալի,
 Դու մեզ տարաւր ռազմի դաշտը, հաղթանակի մեզ տարաւր,
 Եվ փշեցիր գոռ բշտամուն՝ ամբարտաժան դավադիր:
 Քո հանձնարով, հզոր կամփով ազատեցիր կորստից
 Ժողովուրդներին և կուլտուրան՝ եկած անբիւլ դարերից:
 Դու փրկեցիր մանուկների կյանքը քաղցր, քանկազին,
 Խաղաղություն պարգևեցիր ընկերական մեր երկրին:
 Փա՛նֆ Քեզ հավերժ, խաղաղության Դու կուռ պատվար անսասան,
 Դու սրբազան խաղաղության, Դու մարդկության բարեկամ:
 Ով մեծագործ, Քո պանծալի յոթանասուն ամյակին
 Սովետական Հայաստանի զավակները խնդագին
 Բոլոր հոգով, բոլոր սրտով մաղթում են Քեզ երկար կյանք,
 Առողջություն, ուժ և կորով, փառք հավիտյան անբառամ:
 Մեզ պետություն պարգևեցիր և լուսավառ ապագա,
 Մեր սրտերում Քո անունը հավերժ պիտի շողջողա:
 Քո հանձնարեղ անձի մեջ մենք, ով Առաջնորդ բանկազին,
 Տեսնում ենք մեր ամենօրյա բարձրացնող բազուկին:
 Քո ձեռքերով կռած-կռփած եղբայրական դաշինքում
 Մեր նորագառ հայրենիքի անսպառ ուժն ենք տեսնում:
 Զավակներդ, զինվոր արի կոմունիզմի բանակին,
 Ուխտված են նրա հզոր աշխարհասփյուռ ընթացքին:
 Փա՛նֆ Քեզ հավետ, ով մեծագործ, մաղթում ենք մեր ջերմ սրտով,
 Որ աշխարհում հաղթանակի խաղաղությունը անվրդով:
 Որ աշխարհում հաղթանակի երազը ողջ մարդկության
 Եվ հուրհառ արեգակը երջանկության անսահման:
 Թող միշտ հնչե եղբայրական վեճ համերգը հրաշագեղ,
 Ուր ցնծում է և հայ երգը ազատ Մասիս լեռն ի վեր:
 Բոլոր հոգով, բոլոր սրտով մաղթում ենք Քեզ երկար կյանք,
 Առողջություն, ուժ և կորով, փառք հավիտյան անբառամ:

Հայ Ժողովրդի նամակը չափածոյի վերածեց
 Ստալինյան մրցանակի լաւահատ, բանաստեղծ
 ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ